



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ - 1085 - Ա
քաղ. Երևան

«ՕՅՈՒՆՋՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ «ՕՅՈՒՆՋՅԱՆ» ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ-
ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 29-ի N 07/80-2/18577-14 և հոկտեմբերի 29-ի N 06/3-3/18632-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 29-ի N 02/8275-14 և Շիրակի մարզպետարանի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի N 01/5173-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ Շիրակի մարզ, քաղ.Գյումրի, Մհեր Մկրտչյան 47, ՀՎՀՀ 05538995) իրականացվող՝ 5,114,071 դրամ արժողությամբ «Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան» ՊՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2014 թվականի հոկտեմբեր 15-ին կնքված՝ N ՕԲՀ- 131014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 5,114,071 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Օյունջյան» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆ